ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՍԱՆՀԱՆԳՈՒՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-22/66 635-22

ք. Երևան «26» 10 2022թ.

ՀՀ էկոնոմիկայ նախաարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Խառատյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Խաչ Արմ» ՍՊԸ-ն և «ԷԼԼ -ԳԱ-ՄԱՆ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/**-ն, ի դեմս **«Խաչ Արմ» ՍՊԸ-ի** տնօրեն՝ Խ.Ալեքսանյանի, որը գործում է ընկերությունների միջև 26.09.2022թ կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ Կապալառու մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **վարչական շենքի սանհանգուցների վերանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 **Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ**, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետները՝ 10 տարի

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 29 120 004 (քսանիննը միլիոն հարյուր քսան հազար չորս լումա) ՀՀ դրամ, որից 4 853 334 (չորս միլիոն ութ հարյուր հիսուներեք հազար երեք հարյուր երեսունչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 8.736.000 (ութ միլիոն յոթ հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար ***Պատվիրատուի կողմից Կապալառուին կանխավճարը տրվելու է՝ վերջինիս կողմից 1-ին փուլով նախատեսված 70%-ի չափով վերանորոգման աշխատանքները ավարտելու դեպքում:***

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[30.1]:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[34]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	<<ԽԱՉ-ԱՐՄ>> ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5	Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Հ/Հ 900011038875	Ն.Չարբախ 11փ. տ.2
ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն	<<ԷՎՈԿԱԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 02698604	Հ/Հ 16600776203100
Ա. Խառատյան	ՀՎՀՀ 02294286
	Տնօրեն՝ Խ.Ալեքսանյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 26 » 10 2022 թ. կնքված
ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-22/66 ծածկագրով պայմանագրի
G 35-22

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ա և Բ վարչական շենքի յուրաքանչյուր հարկում /Ա մասնաշենք՝ 8 հարկ, Բ մասնաշենք 4 հարկ/ գործող սանհանգույցների վերակառուցում ՝ կանանց և տղամարդկանց առանձնացված սանհանգույցներ (24 նոր) կառուցելու

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Ծավալ	Միավորի գին /ՀՀ դրամ/	Ընդհանուր գին /ՀՀ դրամ/	Ընդհանուր արժեքը /տոկոս/
1	2	3	4	5	6	7
	Նախահաշիվ թ.1-1 Համաշինարարական աշխատանքներ					
	1. Քանդման աշխատանքներ					
1	Մ/պլաստե դռների ապամոնտաժում	մ^2	35.8	1	35.8	
2	Միջնորմների քանդում թեթև բետոնե սալերից 10սմ հաստությամբ	մ^2	100.1	1	100.1	
3	Դռան բացվածքի իրականացում	մ^3	2.9	50	145	
4	Ցեմենտավազե հարթաշերտի քանդում H=30մմ	մ^2	114.2	0.5	57.1	
5	Խեղեսալե հատակների քանդում	մ^2	114.2	0.5	57.1	
7	Գաջե սվաղի քանդում պատերից 30%	մ^2	56.4	0.5	28.2	
8	Պատերից ջրէմուլսիոն ներկի մաքրում	մ^2	188	0.5	94	
9	Կախովի առաստաղի քանդում	մ^2	114.2	0.5	57.1	
10	Կերամիկական սալիկների քանդում պատերից սվաղի հետ միասին	մ^2	264.4	0.5	132.2	
11	Ալյումինե ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում և վերատեղադրում	հատ	12	10	120	
12	Պոլիպրոպիլենային խողովակների ապամոնտաժում և մոնտաժում	մ	44	0.2	8.8	
13	Խողովակների ամրացման ամրակներ	հատ	28	0.1	2.8	
14	Շինաղբի մաքրում և դուրս բերում շինությունից	տ	52.4	3	157.2	
15	Շինաղբի ձեռքով բարձում ա/ինքնաթափի վրա	տ	52.4	3	157.2	
16	Շինաղբի տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տ	52.4	4	209.6	
	Ընդամենը				**1362.2**	**5.19** **5,613460767**
	2. Բացվածքներ, միջնորմներ					
1	Միջնորմների շար բետոնե բլոկներից 400x200x100մմ	մ^2	259.6	8	2076.8	
2	Պատերի ձայնամեկուսացում հանքաբամբակե սալերով 50մմ հատս. KNAUF	մ^2	54	7	378	
3	Միջնորմների շարվածքի ամրանավորում	տ	0.5	80	40	
4	Ջրակայուն գիպսակարտոնով /9.5մմ հաստ/ մեկ կողմից երեսապատում մետաղական կարկասի վրա	մ^2	8.4	10	84	

5	Միաձույլ ե/բետոնե բարավորներ Բ15 դասի բետոնից	մ³	0.43	70	30.1	
6	Բարավորների ամրանավորում	տ	0.32	70	22.4	
7	Ամրանների տեղադրում D14 A500c դասի	տ	0.24	450	108	
8	Ամրանների տեղադրում D8 դասի	տ	0.08	450	36	
9	Մետաղական ներդիր էլեմենտների տեղադրում	տ	0.04	1000	40	
10	Բլոկերի դատարկությունների լցում ցեմենտ-ավազային շաղախով	մ³	3.08	70	215.6	
	Ընդամենը				**3030.9**	**11,79** **12,48997081**
	3. Մետաղապլաստե դռներ, միջնորմներ					
1	Մետաղապլաստե բլոկով, սպիտակ 60մմ հաստ. պրոֆիլներից բացվող դռներ	մ²	68.9	46	3169.4	
2	Շերտավարագույրների տեղադրում	մ²	16.9	15	253.5	
	Ընդամենը				**3422.9**	**13,55** **14,10535521**
	4. Հատակներ					
1	Ցեմենտավազե հարթաշերտ H=30մմ	մ²	114.2	4	456.8	
2	Հատակների երկշերտ հիդրոմեկուսացում տոլով բիտումե մածիկի վրա	մ²	114.2	3	342.6	
3	Հատակների երեսպատում պրեսգրանիտե սալիկներով, ցեմենտե հիմքով սոսնձանյութով 600x600մմ իրանական արտադրության կամ համարժեքը	մ²	114.2	10	1142	
	Ընդամենը				**1941.4**	**8,34** **8,000273626**
	5. Ներքին հարդրաման աշխատանքներ					
1	Պատերի սվաղ գաջե շաղախով բարելավված որակի	մ²	329.9	2.5	824.75	
2	Դռների և լուսամուտների թեքությունների սվաղ գաջե շաղախով	մ²	39.2	3	117.6	
3	Պատերի սվաղ ցեմենտավազե շաղախով	մ²	345.6	3	1036.8	
4	Պատերի երեսապատում հախճասալերով 300x600մմ, ցեմենտե հիմքով սոսնձանյութով /Իրան/	մ²	345.6	8.5	2937.6	
5	Կախովի առաստաղի կառուցում պլաստմասե վահանակներով	մ²	114.2	5	571	
6	Պատերի երկշերտ ներկում կիսափայլ լատեքսային ներկով մածկապատմամբ	մ²	462.8	2.5	1157	
	Ընդամենը				**6644.8**	**27,15** **27,38220778**
	Նախահաշիվ թ.1-2 Ջրամատակարարման աշխատանքներ					
	1. Ապամոնտաժման աշխատանքներ					
1	Լվացարանների ապամոնտաժում, ներառյալ ծորակներ	հատ	12	4	48	
2	Առկա պողպատե խողովակների ապամոնտաժում Φ15-25մմ	մ	98.4	0.6	59.04	
3	Շինաղբի մաքրում, դուրս բերում շենքից	տ	1.27	4	5.08	
4	Շինաղբի ձեռքով բարձում ա/ինքնաթափի վրա	տ	1.27	4	5.08	

5	Շինաղբի տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տ	1.27	4	5.08	
	Ընդամենը				**122.28**	**0,49** **0,50390103**
	2. Մոնտաժման աշխատանքներ					
1	Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում Φ20*3մմ ձևավոր մասերի տեղադրմամբ և փորձարկմամբ	մ	210	2	420	
2	Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում Φ25*25մմ ձևավոր մասերի տեղադրմամբ և փորձարկմամբ	մ	70	2	140	
3	Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում Φ32*4մմ ձևավոր մասերի տեղադրմամբ և փորձարկմամբ	մ	37	3	111	
4	Պոլիպրոպիլենային անցում Φ32*25մմ	հատ	8	0.5	4	
5	Պոլիպրոպիլենային անցում Φ25-20մմ	հատ	12	0.5	6	
6	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Φ25-25մմ	հատ	10	0.5	5	
7	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Φ25-20մմ	հատ	6	0.5	3	
8	Պոլիպրոպիլենային անցումային եռաբաշխիչ Φ25-20մմ	հատ	42	0.5	21	
9	Պոլիպրոպիլենային փական Φ25	հատ	4	3	12	
10	Պոլիպրոպիլենային փական Φ20	հատ	40	2	80	
11	Պոլիպրոպիլենային անկյունակ Φ25 $\alpha=90^0$	հատ	42	0.5	21	
12	Պոլիպրոպիլենային անկյունակ Φ20 $\alpha=90^0$	հատ	42	0.5	21	
13	Կերամիկական լվացարանի տեղադրում սիֆոնով	հատ	21	40	840	
14	Զուգարանակոնքերի տեղադրում տակառիկով, սիֆոնով	հատ	21	60	1260	
15	Խառնարանով ծորակների տեղադրում Φ15մմ, լվացարանների համար	հատ	21	8	168	
16	Ճկուն խողովակների տեղադրում Φ15մմ, L=50սմ	հատ	42	2	84	
17	Անցում ՆՍ DN25(St) x PPRde25	հատ	4	3	12	
	Ընդամենը				**3208**	**14,13** **13,2197784**
	Նախահաշիվ թ.1-3 **Կոյուղու համակարգ**					
	1. Ապամոնտաժման աշխատանքներ					
1	Կոյուղու թուջե խողովակների ապամոնտաժում Φ100մմ	մ	68.9	1	68.9	
2	Կոյուղու թուջե խողովակների ապամոնտաժում Φ50մմ	մ	78	0.7	54.6	
3	Զուգարանակոնքերի ապամոնտաժում	հատ	21	2	42	
4	Հոսակների ապամոնտաժում Φ50մմ	հատ	12	1	12	
5	Շինաղբի մաքրում և դուրս բերում շինությունից	տ	2.9	4	11.6	
6	Շինաղբի բարձում ձեռքով ա/ինքնաթափի վրա	տ	2.9	4	11.6	
7	Շինաղբի տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տ	2.9	4	11.6	
	Ընդամենը				**212.3**	**0,82** **0,874862517**

	2. Մոնտաժման աշխատանքներ					
1	Անցքերի փակում	$մ^3$	0.5	40	20	
2	Կոյուղու պոլիէթիլային խողովակների ռետինե սեղմիչի օղակներով տեղադրում Φ110x2,7մմ	մ	86	4	344	
3	Կոյուղու պոլիէթիլային խողովակների ռետինե սեղմիչի օղակներով տեղադրում Φ50x2մմ	մ	123	3.5	430.5	
4	Պոլիէթիլային ուղիղ եռաբաշխիչ de110x50	հատ	6	2	12	
5	Պոլիէթիլային ուղիղ եռաբաշխիչ de110x110	հատ	18	2	36	
6	Պոլիէթիլային թեք եռաբաշխիչ de110x50	հատ	18	2	36	
7	Պոլիէթիլային թեք եռաբաշխիչ de110x110	հատ	13	2	26	
8	Պոլիէթիլային թեք եռաբաշխիչ de50x50	հատ	8	2	16	
9	Պոլիէթիլային անկյունակ de110մմ $\alpha=45^0$	հատ	18	2	36	
10	Պոլիէթիլային անկյունակ de50մմ $\alpha=45^0$	հատ	14	2	28	
11	Պոլիէթիլային ստուգիչ de110մմ	հատ	16	4	64	
12	Թասակ de100մմ	հատ	2	50.32	100.64	
13	Ռետինե կցորդիչ Φ100 x PVC de110	հատ	2	20	40	
14	Այլումինե հոսակների տեղադրում Φ50մմ	հատ	21	8	168	
15	Կոյուղու համակարգի հիդրավլիկական փորձարկում	մ	209	0.5	104.5	
	Ընդամենը				**1461.6**	**6,6** **6,023240931**
	Նախահաշիվ թ.1-4 Էլեկտրամոնտաժային աշխատանքներ					
1	Անջատիչների ու վարդակների ապամոնտաժում	հատ	32	1	32	
2	Լուսավորության վահանակ 3 հատ միաֆազ 10Ա ավտոմատ անջատիչներով, 1 հատ միաֆազ 25Ա գծային ավտոմատներով, 1 հատ 25Ա պաշտպանիչ անջատման սարքավորում միաբևեռ 25Ա	կ-տ	18	18	324	
3	Մեկուսիչ ժապավեն	հատ	30	0.2	6	
4	PVC ճկախողովակ Φ20մմ	մ	400	0.25	100	
5	Φ20մմ PVC ճկախողովակի ամրակ	հատ	300	0.5	150	
6	80x80x75մմ ՊՎՔ խողովակի միացման տուփ	հատ	12	0.5	6	
7	3x1,5մմ^2 PVC/PVC մալուխ չայրվող կամ քիչ ծխացող BBG LS	մ	450	0.65	292.5	
8	3x4մմ^2 PVC/PVC մալուխ չայրվող կամ քիչ ծխացող BBG LS	մ	90	0.8	72	
9	Երկդիրքային ՊՎՔ գերմանական տիպի տուփ (2x2 մոդուլ)	հատ	21	2	42	
10	Երկդիրքային ՊՎՔ դիմային շրջանակ և ներդիր (անջատիչների և վարդակների համար)	հատ	96	1.5	144	
11	16A բաժանիչ տուփով միդիրքային վարդակ գերմանական տիպի	հատ	21	1.5	31.5	
12	16A բաժանիչ տուփով միդիրքային անջատիչ	հատ	75	1.5	112.5	
13	Լուսադիոդային լուսատու 10վտ, ձևը կլոր Φ45մմ, լուսային հոսքը 855 ԼՄ, լուսային	հատ	64	8	512	

	արդյունավետությունը 86լմ/վտ, լույսի ջերմաստիճանը 4000K, լուսահաղորդման ինդեքսը 80, սան.հանգույցում					
14	Ակոսների փորում պատերում 20x40մմ կտրվածքով	մ	160	0.8	128	
15	Ակոսների սվաղում գաջե շաղախով	$մ^2$	6.4	2	12.8	
	ընդամենը՝				**1965.3**	**8,59** **8,098762624**
	Նախահաշիվ թ.1-5 Օդափոխություն					
1	Օդափոխության ցանցի տեղադրում	հատ	96	4	384	
2	Օդատար պոլիէթիլենային խողովակից Φ=100մմ,	մ	12	2	24	
3	Ձևավոր մասեր Φ=100մմ	հատ	18	2	36	
4	Պատի օդափոխիչ 16վտ հզորությամբ	հատ	12	20	240	
5	Առանցքային օդամղիչ 150 մ3/ժ	հատ	2	80	160	
6	Անցքերի բացում պատերում	հատ	10	5	50	
7	Անցքերի փակում	$մ^3$	0.5	2	1	
	Ընդամենը				**895**	**3,56** **3,688186307**
ԸՆԴԱՄԵՆԸ /հազ. դրամ/					**24266.67**	**100.00**
ԱԱՀ 20%					4853.334	
ԸՆԴԱՄԵՆԸ /հազ. դրամ/					**29120**	

Սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.

ըստ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների) պետական լիցենզիա՝ քաղաքաշինության հետևյալ ոլորտի ներդիրներով՝ **«Բնակելի, հասարակական և արտադրական»:**

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետները՝ 10 տարի

Վճարումը կատարվելու է փուլային տարբերակով:
1-ին փուլի ընթացքում նախատեսվում է 70%-ի չափով վերանորոգման աշխատանքների իրականացում, որի վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2022 թվականի դեկտեմբերի 25-ը:
2-րդ փուլի համար նախատեսվում է 30%-ի չափով կանխավճար և վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2023 թվականի փետրվարի 16-ը: Պատվիրատուի կողմից Կապալառուին կանխավճարը տրվելու է՝ վերջինիս կողմից 1-ին փուլով նախատեսված 70%-ի չափով վերանորոգման աշխատանքները ավարտելու դեպքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ 900011038875
ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02698604
Ա. Խառատյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ԽԱՉ-ԱՐՄ>> ՍՊԸ
Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Ն.Չարբախ 11փ. տ.2
<<ԷՎՈԿԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 16600776203100
ՀՎՀՀ 02294286
Տնօրեն՝ Խ.Ալեքսանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 26 » 10 2022 թ. կնքված
ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-22/66 ծածկագրով պայմանագրի
635-22

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Ա և Բ վարչական շենքի յուրաքանչյուր հարկում /Ա մասնաշենք՝ 8 հարկ, Բ մասնաշենք 4 հարկ/ գործող սանհանգույցների վերակառուցում ՝ կանանց և տղամարդկանց առանձնացված սանհանգույցներ (24 նոր) կառուցելու

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Շին. մոնտաաժային աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց **հետո *6 օր - 1-ին փուլ***
2	*Քանդման ենթակա աշխատանքների իրականացում*	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կն456քվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո *30 օր-* ***1-ին փուլ***
3	*Վերանորոգման աշխատանքների իրականացում*	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո *58 օր-* ***1-ին փուլ***
4	*Սան.հանգույցների վերանորոգում՝ ներառյալ տեխնոլոգիական աշխատանքներ*	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո *58 օր-* ***1-ին փուլ***
5	*Հայտնաբերված թերությունների վերացում, տարածքի մաքրում և բարեկարգում*	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո *՝10 օր-* ***2-րդ փուլ***
6	*Անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում, շահագործման հանձնում*	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո *10 օր-* ***2-րդ փուլ***
	Ընդհանուր աշխատանքներ	**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո**	**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 100 օր:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ 900011038875
ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02698604
Ա. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ԽԱՉ-ԱՐՄ>> ՍՊԸ
Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Ն.Չարբախ 11փ. տ.2
<<ԷՎՈԿԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 16600776203100
ՀՎՀՀ 02294286
Տնօրեն Խ.Ալեքսանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 26 » 10 2022 թ. կնքված
***ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-22/66** ծածկագրով պայմանագրի*
635-22

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611300/501	**վարչական շենքի սանհանգույցների վերանորոգման աշխատանքներ**	-	-	-	-	-	-	-	-	-	20384002,8	20384002,8	29.120.004	29.120.004

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ 900011038875
ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02698604
Ա. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ԽԱՉ-ԱՐՄ>> ՍՊԸ
Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Ն.Չարբախ 11փ. տ.2
<<ԷՎՈԿԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 16600776203100
ՀՎՀՀ 02294286
Տնօրեն՝ Խ.Ալեքսանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 26 » 10 2022 թ. կնքված
ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-22/66 *ծածկագրով պայմանագրի*
635-22

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 26 » 10 2022 թ. կնքված
ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-22/66 *ծածկագրով պայմանագրի*
635-22

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն